Նոյեմբերի 13-ից 18-ը «Նարեկացի» միությունում ցուցադրվում են ակնթարթում արված շարժերը, որ ֆիքսել է ռեժիսոր Ժիրայր Աղավելյանը: Ֆոտոարթի ժանրում ստեղծված աշխատանքները պատահական սկիզբ ու ծնունդ չեն: Ժիրայր Աղավելյանը երկար տարիներ ռեժիսոր էր Երեւանի կենտրոնական հեռուստաալիքում՝ Հ1-ում, եւ նրա տասնյակ գեղարվեստա-վավերագրական ֆիլմերն արժանացել են միջազգային փառատոների մրցանակների: Հետո նույն «գործիքով», որով կինո էր ստանում, որոշեց արձանագրել նաեւ վայրկյանում, ժամանակի աներեւակայելի փոքր միավորում տեղի ունեցող շարժը: Ինչպես ինքը՝ Ժիրայր Աղավելյանն է ասում՝ «Շարժումից ստանալ ստատիզմ, ստատիզմից ստեղծել շարժում: Այսինքն՝ ֆիլտրել եւ նոր շարժում բերել: Եվ բնությունն է ինձ օգնել տեսնել, հայացքով որսալ, գնահատել, հասկանալ նաեւ





մարդու բնությունը»:
Մի վայրկյանի
շարժումները
տարբեր են՝ կախված
տարածությունից ու
միջավայրից:
Ժամանակի հոսքը
վայրկյանում
տարբեր է
թատրոնում,
կինոյում,
գրականության մեջ,
փողոցում,
խանութում: Նույն
կերպ՝ ժամանակը
տարբեր կերպ է
հոսում
Հայաստանում ու
Բոստոնում, որտեղ
արդեն 20 տարի է
բնակվում է Ժիրայր
Աղավելյանը:
«Շատ կուզեի մնալ
Հայաստանում:
Ապրել այստեղ՝ իմ
հողում: Ինձ շատ
կուրախացներ, եթե
կարողանայի
աշխատանք գտնել:
Հարցնում եք՝ ինչո՞ւ
եմ ուզում ապրել
Հայաստանում:
Որովհետեւ այստեղ
իմն է, իմ աշխարհն
է, իմ երկինքն է, իմ
մարդիկ են»,- ասում
է Ժիրայր
Աղավելյանը:
Թերեւս, մարդու
հանդեպ մեծ սիրուց
է, որ հեղինակը չի
վերնագրում իր
նկարները, իր
տեսածն ու ֆիքսածը:
Ֆոտոարթի
նմուշները
դիտողներին
ազատություն է
տրված տեսնելու,

ընկալելու եւ
վերնագրելու
այնպես, ինչպես
իրենք են կամենում:
Եվ նկարը պատմելն
էլ սխալ է:
Որովհետեւ
վայրկյանի շարժումը
միլիարդ մարդու
համար միլիարդ
անուն կարող է
ունենալ: Ուղղակի
տեսնել է պետք:
Եթե անցյալ
ցուցահանդեսին
նկարների
ցուցապաստառների
վրայով սահում էր
հեղինակի ստեղծած
երաժշտությունը,
ապա այս անգամ
Ժիրայր Աղավելյանը
բերել էր բառերի
երգը՝ «Առ ինձ
ձեռքերիդ մեջ»
գրքույկը:
Անծայրածիր
անապատ...
Այրող արեւ,
Վերջին ճիգ,
Վերջին ձգտում,
Պատրանքը քո
այրվում,
Մոխիր դառնում,
Քամուց ավազին
խառնվում:
Անծայրածիր
անապատ:
Ժիրայր Աղավելյան
Պատկերներ կարող
ես ստանալ
հնչյունից, վրձնից,
ֆոտոապարատի մեկ
շխկոցից եւ բառից:
Գրքույկում
«որմնանկարներ»
են, որ
ներդաշնակվել են
պատերից կախված

պատկերներին: Դա Զեր ու Ժիրայրի զրույցի շարունակությունն է, լրացումը, միահյուսումը... Ինչպես կուզեք՝ հասկացեք: Ազատ եք:

Մարինա Բաղդագյուլյան